առնել զայդ. և պատասխանեաց թէ Ոչ է լեալ յօրէնս մեր և ոչ լիցի. գտցեն զայլ ոմն ի մէջ մեծ քաղաքիս և արասցեն հարսանիս. և տարան արքն զպատասխանիս առ նա։ Եւ իբրև ոչ եղև՝ եկին մայր տղին և մամ աղջկանն կանամբ միով և նստան յանդիման վարդապետին, որ էաք յԱստուածածին, և ասեն. Հրամայեա՛ զի լիցի այս. և ասէ Զէ՛ լինելոց։ Եւ ասեն. Զիա՞րդ ոչ լինի, բազում լեալ է ի քաղաքս և մին այս։ Եւ ասէ վարդապետն. Առողքն կրեսցեն զմեղս նոցա, միթէ լա՞ւ է լեալ, այլ օրինազանցութիւն և բարկութիւն Աստուծոյ և անէծք, և որք արարեալ են՝ օրս ոչ տեսեալ են. կայ բազում աղջիկ և տղայ, զհասս առցեն օրինօք սուրբ հայրապետացն։ Եւ լացին մեծաւ աղաղակաւ թէ Անիրաւութիւն է արարմունք քո, ի հաւատոց կու ելանեն, վասն է՞ր առնես զայդ։ Ո՛վ որ ի դժոխս մտանէ՝ կամ ի հաւատոցն ելեալ է և բաժին, կամ յօրինացն ելեալ և բաժին լեալ։ Եւ սկսան ասել. Մեղք նոցա ի գլուխս մեր եղիցի, հրաման տո՛ւր։ Եւ ասէ վարդապետն. Թէ ես հրամայեմ՝ մեղք յինէն պահանջի։ Եւ ասեն. Նոքա ամենեքեան որ եռուն միթէ ի մե՞ղս անկան։ Եւ ասէ վարդապետն. Այո՛ անկան, և մեծ դատաստան պահի նոցա և ի դժոխս մաշելոց են։ Եւ ելեալ նոքա ասեն. Մեք ևս առնեմք և վասն նոցա ի դժոխս մաշիմք, և գնացին։ Եւ վարդապետն ձայնեալ զտաներէց զերկոցունց և պատուիրեաց նոցա բազում, զի խրատեսցեն զնոսա և զգուշացուսցեն զի դարձցին և մի արասցեն զի զաւրհնութիւնս մեր վայելեսցեն. ընդ նմին և ասաց զանէծս և զբանադրանս և զանվաւեր[1]) պսակն և զեկեղեցի չթողուլն։ Բազում անգամ գնացին երիցունքն և եկին և ոչ եղև հնար զներկեալսն ի չարն

1) զանուավեր.